ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Օձուն, 060805080, odzun.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 փետրվարի 2020 թվականի, N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0015-0002 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

1. Օձուն համայնքի, Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0015-0002 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,132 հեկտար մակերեսով հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը և օժանդակ շինություններին տրամադրել Օձուն համայնք, գյուղ Այգեհատ, փողոց 10 տուն 8 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՏԻՖԱՆՅԱՆ

2020 թ. փետրվարի 4
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք,գ.Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Օձուն, 060805080, odzun.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2020թվականի, N 14-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-1053-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0029 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 19.38 ՔԱՌ. ՄԵՏՐ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ԷԴԻԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 01.02.2020 թվականի N 11-Ա որոշման, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը համայնքի անվամբ՝ N 15012020-06-0046 կազմված 15.01.2020թ.,քաղաքացի Գագիկ Թորոսյանի դիմումը՝

1. ՀՀ Լոռու մարզ Օձուն համայնք գ. Օձուն, փողոց 5, թիվ 10/1 փոստային հասցեում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 19.38 ք.մ.մակերեսով ատամնաբուժական կենտրոնը, 120400/մեկ հարյուր քսան հազար չորս հարյուր/ ՀՀ դրամով և ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.0029հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 10000 /տաս հազար/ ՀՀ դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած անձին՝Գագիկ Էդիկի Թորոսյանին:

2. Մեկամսյա ժամկետում Գ.Թորոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր:

3.Սահմանված վճարները 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2020 թ. փետրվարի 5
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ.Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Օձուն, 060805080, odzun.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2020թվականի, N 15-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ,, Իրավական ակտերի մասին.. Հայաստանի Հանրապետության օրենքի 71 հոդվածը, ,,Տեղական ինքնակառավարման մասին.. Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի N Կ-04022020-06-0056 կասեցումը՝

1. Ուժը կորցրած ճանաչել Օձուն համայնքի ղեկավարի 19.12.2019 թվականի, թիվ 196-Ա որոշումը և 23.01.2020թ թիվ 9-Ա որոշումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020թ. փետրվարի 5
ՀՀ Լոռու մարզ Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Օձուն, 060805080, odzun.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2020 թվականի, N 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0548-0019, 06-014-0548-0018 ԵՎ 06-014-0548-0017 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ԶԱՎԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1066-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 29.12.2011 թվականի թիվ 1918 որոշմամբ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, վարելահողերի թիվ՝ N 25112019-06-0040, N 25112019-06-0038 և N 25112019-06-0040 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականները.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0548-0019 ծածկագրով, 0.38087 հեկտար մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքի հողամասի (այսուհետ՝ անշարժ գույք) հողատեսքը փոխել գյուղատնտեսական նպատակային նշանակության, ջրովի, 4-րդ կարգի, բազմամյա տնկարկի հողատեսքի՝ պտղատու այգու (ծիրանենու տնկարկ):

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0548-0018 ծածկագրով, 1.21176 հեկտար մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքի հողամասի (այսուհետ՝ անշարժ գույք) հողատեսքը փոխել գյուղատնտեսական նպատակային նշանակության, ջրովի, 4-րդ կարգի, բազմամյա տնկարկի հողատեսքի՝ պտղատու այգու (ծիրանենու տնկարկ):

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0548-0017 ծածկագրով, 0.3349 հեկտար մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի հողամասի (այսուհետ՝ անշարժ գույք) հողատեսքը փոխել գյուղատնտեսական նպատակային նշանակության, ջրովի, 3-րդ կարգի, բազմամյա տնկարկի հողատեսքի՝ պտղատու այգու (ծիրանենու տնկարկ):

4. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի հողատեսքի փոփոխությունը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

5. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020 փետրվարի 5
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք,գ.Օձուն